

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<<< ՍՄ-ՇՀԱՊԾՁԲ 11/1>>**

ք. Կապան

<<_27_>> հոկտեմբերի 2014 թ.

«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, ի դեմս Ռ. Ղազարյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և „ԱրմենՏել, ՓԲԸ-ն ի դեմս ընկերության լիազորված անձ Գ. Զատիկյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինտեռնետային կապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության միավորի գինը՝ ամսական 1 Աբիթ/վրկ կազմում է 1380(հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Մինչև ֆինանսական միջոցների նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂՔԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:


7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ
«Սյունիքի մարզպետարան»
Ք. Կապան, Գ. Նժդեհի 1
Կապանի ՏԳԲ
Հ/Հ 900311080049
ՀՎՀՀ 09415375
Էլ. փոստ: syunik@mta.gov.am
հեռ. 28-78-30
Աշխատակազմի ղեկավար
Ռ. Ղազարյան

ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Ահարոնյան 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ 02500052
Էլ. հասցեն՝ gorzatikyan@beeline.am
Հեռ. 010-29-05-05, 099-00-44-00

Լիազորված անձ
Գ. Հատիկյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ


Ձեռքբերվող ծառայության նկարագիր	
1	Կապի միացման տեսակը Առանձնացված օպտիկամանրաթելային մալուխի միջոցով
2	Ինտերնետային կապի միացման նախապայմանները Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում: Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում Կատարողի հաշվին
3	Օպերատորի ցանցային հանգույցի և Պատվիրատուի ցանցային հանգույցի միջև տվյալների փոխանցում Օպտիկամանրաթելային մալուխով՝ նվազագույնը 100 Մբիթ/վրկ:
4	Ինտերնետային կապի սպասարկման նախապայմանները Առանձնացված օպտիկամանրաթելային մալուխով 100Մբիթ/վրկ Երաշխավորված երկկողմանի ինտերնետ կապի արագություն (ՀՀ և ՀՀ տարածքներից դուրս այցելած կայքերի համար)
5	Այլ Պահանջներ Անհրաժեշտության դեպքում պահուստային միացման առկայություն՝ ապահովելով համարժեք արագություն Անհրաժեշտության դեպքում հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում Անհրաժեշտության դեպքում սերտիֆիկացված մասնագետի կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի <on-line> վերահսկման հնարավորություն Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում /պարտադիր օգտագործման պայմանով/ Անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ սարքավորումների տրամադրում Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում՝ ըստ պահանջի Անհրաժեշտության դեպքում՝ օգտվողի կողմից ՀՀ տարածքից դուրս այցելած հանգույցների վերծանման տրամադրում Տեխնիկական խնդիրների առկայության դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուի կապի պատասխանատուին
	Սկիզբը 01.01.2015թ.
	ավարտը 25.12.2015թ.

ԳՆՈՐԴ

ՀՀ Մյունխիքի մարզպետարան
ք. Կապան, Գ. Լժդեհի 1
Կապանի ՏԳԲ
Հ/Հ 900311080049
ՀՎՀՀ 09415375
Հեռ. 28-78-30

Էլ. փոստ: syunik@mfa.gov.am
Աշխատակազմի ղեկավար

(Handwritten signature)



ԿԱՏԱՐՈՂ

ք. Երևան, Անարոնյան 2
„Հայեկոնտոլբուսնեկ“, ՓԲԸ

Հ/Հ 163004038879

Հեռ. 05-05, 099-00-44-00
Էլ. փոստ: kyan@beeline.am



(Handwritten signature)
Զատիկյան
թան

27 հոկտեմբերի 2014 թ. կնքված
N 22 ՍՍՇՀ ԱԾՁԲ 11/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար ՀՀ դրամ

Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ. ըստամիսերի՝ ընդ որում

N	Ծառայություն անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ. ըստամիսերի՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Sum
1	Ինտերնետային կապի ծառայություն	331.2	331.2	331.2	745.2	745.2	745.2	1159.2	1159.2	1159.2	1656.0	1656.0	1656.0	1656.0

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ Սյունիքի մարզպետարան
ք. Կապան, Գ. Նժդեհի 1

Կապանի ՏԳԲ

Հ/Հ 900311080049


ՀՎՀՀ 09415375

Հեռ. 28-78-30

Էլ. փոստ: syunik.gartughar@mta.gov.am

Աշխատակազմի ղեկավար

Ռ. Գաղարյան
Կ.Տ.



ՍՍՏ ԱԿԱՐԱՐ

ք. Երևան, Ահարոնյան 2
<<Հայ էլեկոնմիջանկ>> ԲԲԸ

Հ/Հ 163004038879


ՀՎՀՀ 02500052

Հեռ. 010-23-77-97, 099-20-09-79

Էլ. փոստ: gorzatikyan@beeline.am

Լիազորված անձ

Գ. Զատիկյան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՍՍ-ՇՀԾՁԲ-11/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

1. Պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը
 ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ
 ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ. Նժդեհի 1

2. Գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրությունը

Ինտերնետային կապի ծառայության մատուցման սպասարկումը պայմանավորված է մարզպետարանի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությամբ: Ծառայությունների ձեռքբերումը նախատեսված է 2015 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմին հատկացված միջոցների հաշվին: Հաշվի առնելով, որ ապրանքը ներառված է շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումների ցանկում, գնման գործընթացը կազմակերպվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով:

1. Գնային առաջարկներ ներկայացրած մասնակցի անվանումը և գնային առաջարկը

Մասնակցի	
անվանումը	գնային առաջարկը/դրամ
„ԱրմենՏել,, ՓԲԸ	1380

2. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները

Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հայտերի մերժման հիմնավորումը

„ՋԷՆՍԻ-ԱԼՖԱ,, ՓԲԸ կողմից գնային առաջարկը ներկայացված չէր տառային արտահայտությամբ:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները

Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Սույն գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մաս են հանդիսանում ՀՀ ՍՍ-ՇՀԾՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի և կնքված պայմանագրի պատճենները, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ գնման ընթացակարգ ավանագրությանը կցվող փաստաթղթերը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
 Աշխատակազմի ղեկավար



Ռ. Ղազարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

« _____ » _____ 2014թ. № _____
Ձեր _____ № _____

Հարգելի գործընկեր

/ըստ ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1 ծածկագրով
մրցույթի շրջանակում գրանցված
կազմակերպությունների ցանկի/

Հարգելի պարոն /տիկին

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեր բերելու Գնումների աջակցման կենտրոնի և « _____ » ՍՊԸ-ի, միջև _____ թ. կնքված ՇՀԾՁԲ-11/1 շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունը: Ծառայության մատուցման պայմաններն են՝ Կատարողը ծառայությունը իրականացնում է Կապան քաղաքում:

Հայտնում ենք, որ ծառայության գնման վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ. Նժդեհի 1, 209 սենյակ հասցեով, Ա. Խաչատրյանին, մինչև 2014թ. հոկտեմբերի 16-ը, ժամը 15⁰⁰-ը:

Հայտերը կբացվեն ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ. Նժդեհի 1, 209 սենյակ հասցեում, 2014թ. հոկտեմբերի 16-ին ժամը 15⁰⁰-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը

Այս փաստաթղթի ներկայացում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

Նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որից պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝



Ռ. Ղազարյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՇՀԾՁԲ 11/1>>

ք. Երևան

<< >> _____ 20 թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, ի դեմս Ռ. Ղազարյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և _____ ի դեմս ընկերության տնօրեն _____ (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին վոյն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է -----ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից _____ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ---օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (տառերով)) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևաբանել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1 և N2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ Սյունիքի մարզպետարան

Ք. Կապան, Գ. Նժդեհի 1

Կապանի ՏԳԲ

Հ/Հ 900311080049


ՀՎՀՀ 09415375

Էլ. փոստ: syunik@mta.gov.am

հեռ. 28-78-30

Կապանի շրջանի ղեկավար

Ռ. Ղազարյան




Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

		Ձեռքբերվող ծառայության նկարագիր
1	Կապի միացման տեսակը	Առանձնացված օպտիկամանրաթելային մալուխի միջոցով
2	Ինտերնետային կապի միացման նախապայմանները	Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում: Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում Կատարողի հաշվին
3	Օպերատորի ցանցային հանգույցի և Պատվիրատուի ցանցային հանգույցի միջև տվյալների փոխանցում	Օպտիկամանրաթելային մալուխով՝ նվազագույնը 100 Մբ/վրկ:
4	Ինտերնետային կապի սպասարկման նախապայմանները	Առանձնացված օպտիկամանրաթելային մալուխով 100 Մբ/վրկ: երաշխավորված երկկողմանի ինտերնետ կապի արագություն (<< և << տարածքներից դուրս այցելած կայքերի համար)
5	Այլ Պահանջներ	Անհրաժեշտության դեպքում պահուստային միացման առկայություն՝ ապահովելով համարժեք արագություն Անհրաժեշտության դեպքում հավելյալ մոլտըային կապի արագության տրամադրում Անհրաժեշտության դեպքում սերտիֆիկացված մասնագետի կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի <on-line> վերահսկման հնարավորություն Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում /պարտադիր օգտագործման պայմանով/ Անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ սարքավորումների տրամադրում Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում՝ ըստ պահանջի Անհրաժեշտության դեպքում՝ օգտվողի կողմից << տարածքից դուրս այցելած հանգույցների վերծանման տրամադրում Տեխնիկական խնդիրների առկայության դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուի կապի պատասխանատուին
	Սկիզբը	ավարտը
	01.01.2015թ.	25.12.2015թ.

ԳՆՈՐԴ

«Սյունիքի մարզպետարան»
Ք. Կապան, Գ. Լժոճեհի
Կապանի ՏԳԲ
Հ/Հ 900311080049
ՀՎՀՀ 09415375
Հեռ. 28-78-30



Էլ. փոստ: syunik@mta.ge.am
Աշխատակազմի ղեկավար
Նազարյան

Գ ն ի ա ռ ա ջ ա Ր Կ

Ուսումնասիրելով ՇՀԾՁԲ-11/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, ինչպես նաև Ձեր կողմից տրամադրված ծանուցումը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
 -----ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.
 Գնման ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

(ՀՀ դրամ)

Չափա- բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տատերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Առանձնացված օպտիկամանրաթելային մալուխով երաշխավորված երկկողմանի ինտերնետ կապի արագություն			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

*3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
 **Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փոխալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունյակում:

 Մասնակցի անվանումը (անունը) (ղրկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

 (ստորագրությունը)

Կ. Տ.

 (ամսաթիվը, ամիսը) 20 թ.

 /Մասնակցի անվանումը/անունը/ղրկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը/

 (ստորագրությունը)

Կ.Տ.


<< _____ >> _____ 20 _____ թ.
 (ամսաթիվը, ամիսը)

№/կ	ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐԻՆՆԵՐԻ ԵՎ ՉՍՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՍՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2015թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝												Ընդամենը տարեկան
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		հունվ.	փետրվ.	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտ.	հոկտ.	նոյեմբ.	դեկտեմբ.	
		20%	20%	20%	45%	45%	45%	70%	70%	70%	100%	100%	100%	
	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ													
1	Առանձնացված օպտիկամանրաթելային մալուխով երաշխավորված երկկողմանի ինտերնետ կապի արագություն	20%	20%	20%	45%	45%	45%	70%	70%	70%	100%	100%	100%	100%
	Ընդամենը	20%	20%	20%	45%	45%	45%	70%	70%	70%	100%	100%	100%	100%

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

ԳՆՈՐԴ
 ՀՀ Սյունիքի մարզպետարան
 ք. Կապան, Գ. Նժդեհի 1

Կապանի ՏԳԲ
 Հ/Հ 900311080049
 ՀՎՀՀ 09415375
 Հեռ. 28-78-30



Էլ. փոստ: syunik@mta.am
 ՀՀ Սյունիքի մարզպետարանի
 Կապանի ՏԳԲ

ԳԼՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

-----ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու Սյունիքի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
մարզպետարանի աշխատակազմի կողմից N «ՍՄ-ՇՀԾԶԲ-11/1» ծածկագրով հայտարարված ընթացակարգի և
հրավերի
(ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

-----ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադիջ կողմից հիմնադրված
կամ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա
մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ:

- 1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
- 2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

-----ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաչափում և հակամրցակցային համաձայնություն:

-----ի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

էլեկտրոնային փոստի հասցեն է՝ -----
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

(ստորագրություն)

Կ.Տ.

<< >> _____ 20 ____ թ.
(ամսաթիվը, ամիսը)

Կատարող _____

գտնվելու վայրը _____
hh _____

հվհհ _____

Պատվիրատու _____

գտնվելու վայրը _____
hh _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ

« _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Կատարողը՝ ի դեմս _____

, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20 թ-ից _____ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի բանական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_____ և ստորագրություն
_____ և զգգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
_____ և ստորագրություն
_____ և զգգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված
 ՀՀ ֆինանսների նախարարի <<14 >> օգոստոսի 2014 թ.
 թիվ 526-Ա հրամանի

Հավելված 10
 ՀՀ ֆինանսների նախարարի << 02 >> օգոստոսի 2013թ.
 թիվ 667-Ա հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՀՀՍՄ-ՇՀԱՊՁԲ-11/1

Պատվիրատուն՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, որը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Գ. Նժդեհի 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀՍՄ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրով ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի /երի/ մասին տեղեկատվությունը:

Չափա- քաժեի համարը	Անվանումը	Չափ- ման միա- վորը	Գնման առարկայի				Համառոտ նկարագրությունը (տեխնիկական ընութագիր)	Պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական ընութագիր)
			Քանակը ¹		Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/			
			Առկա ֆինանսա- կան միջոցներ ով ²	ընդհանուր	Առկա ֆինանսական միջոցներով ³	ընդհանուր		
1	Ինտերնետային կապի ծառայություն	դրամ	0	1	0	2000000	Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում: Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում կատարողի կողմից: Անհրաժեշտության դեպքում պահուստային միացման առկայություն	Առանձնացված օպտիկամանրա- թելային մալուխով 100մ քիթ/վրկ երաշխավորված երկկողմանի ինտերնետ կապի արագություն /ՀՀ և ՀՀ տարածքներից դուրս այցելած կայքերի համար/:
...								

¹ Լրացվում է կնքված պայմանագրով գն-վեճից ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը
² Լրացնելու փյալ պայմանագրի շրջանակներում առկա ֆինանսական միջոցներով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը, իսկ պայմանագրով նախատեսված ընդհանուր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը լրացնելու կողքի՝ «ընդհանուր» սյունակում:
³ Եթե փյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնելու առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնելու կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը		„Գնումների մասին,, ՀՀ օրենքի 17-րդ հոդված 4-րդ կետ								
Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ⁴										
Բաժին	Խումբ	Դաս	Մրագիր	Բյուջե	Արտաբյուջե					
01	01	01	03	v						
...										
Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը 06.10.2014թ.										
Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը ⁵			1							
			...							
Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը			1	Հարցարդյան ստացման	Պարզաբանման					
			...							
Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Ցուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները								
		ՀՀ դրամ ⁶								
		Գինն առանց ԱԱՀ		ԱԱՀ		Ընդհանուր				
		առկա ֆինանսական միջոցներով ⁷	ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով ⁸	ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով ⁹	ընդհանուր			
Չափաբաժին 1										
1	„ԱրմենՏել,, ՓԲԸ		1380.000	-	276000	1656000				
2										
...										
Չափաբաժին 2										
1										
2										
...										
Այլ տեղեկություններ		Մանրություն՝ եթե գնման ընթացակարգում կիրառվել են Գնումների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված բանակցություններ գների նվազեցման նպատակով:								
Տվյալներ մերժված հայտերի մասին										
Չափաբաժնի համարը	Մասնակցի անվանումը	Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար)								
		Մրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը	Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը	Առաջարկված գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը	Մասնագիտական գործունեություն	Մասնագիտական փորձառությունը	Ֆինանսական միջոցներ	Տեխնիկական միջոցներ	Աշխատանքային ռեսուրսներ	Գնային առաջարկ
1										գնային առաջարկը չի ներկայացվել տառային արտահայտությամբ

⁴ Այլ աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում նշել ֆինանսավորման աղբյուրը
⁵ Նշվում են հրավերում կատարված բոլոր փոփոխությունների ամսաթիվերը:
⁶ Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գրել րվիլալ հրավերով սահմանած փոխարժեքով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:
⁷ Լրացնել րվիլալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարի չափը առանց ԱԱՀ, իսկ առաջարկված ընդհանուր գումարը առանց ԱԱՀ րլացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:
⁸ Լրացնել րվիլալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարից հաշվարկված ԱԱՀ-ն, իսկ առաջարկված ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ն րլացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:
⁹ Լրացնել րվիլալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարի չափը՝ ներառյալ ԱԱՀ, իսկ առաջարկված ընդհանուր գումարը՝ ներառյալ ԱԱՀ, րլացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

...									
-----	--	--	--	--	--	--	--	--	--

Այլ տեղեկություններ **Ծանոթություն՝ Հայտերի մերժման այլ հիմքեր:**

Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը	16.10.2014թ.			
Անգործության ժամկետ	Անգործության ժամկետի սկիզբ	17.10.2014թ.	Անգործության ժամկետի ավարտ	23.10.2014թ.
	Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը	23.10.2014թ.		
Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը	27.10.2014թ.			
Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը	27.10.2014թ.			

Չափաբաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Պայմանագրի				Գինը	
		Պայմանագրի համարը	Կնքման ամսաթիվը	Կատարման վերջնա-ժամկետը	Կանխավճարի չափը	ՀՀ դրամ	
						Առկա ֆինանսական միջոցներով	Ընդհանուր ¹⁰
1	„ԱրմենՏել, ՓԲԸ	ՀՀՍՄ-ԵՀԱՊԶԲ-11/1	27.10.2014թ.	25.12.2015թ.	-	-	1656000
...							

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն					
Չափաբաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Հասցե, հեռ.	Էլ.-փոստ	Բանկային հաշիվը	ՀՎՀՀ ¹¹ / Անձնագրի համարը և սերիան
1	„ԱրմենՏել, ՓԲԸ	ք. Երևան, Ահարոնյան 2	gorzatikyan@beeline.am	163004038879	02500052
...					

Այլ տեղեկություններ **Ծանոթություն՝** Որևէ չափաբաժնի չկայացման դեպքում պատվիրատուն պարտավոր է լրացնել տեղեկություններ չկայացման վերաբերյալ:

Մասնակիցների ներգրավման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները

Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը

Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները

¹⁰ Եթե պայմանագիր կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախադրված են ավելի շին միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել փոխադրված ստանկում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով «Առկա ֆինանսական միջոցներով» սյունյակում:
¹¹ Չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվարկային հաշիվ չունեցող անձը: